



«ՍԵՎԱՆԻ Խ.ԱՔՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ
ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ
ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ ՕՏԱՐ ԼԵԶՎԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՄԵԹՈԴԻԿԱՆ ԵՎ
ԳԵՐՄԱՆԵՐԵՆ ԼԵԶՎԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՀԵՂԻՆԱԿ՝ ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարսերի

Ռ. Պետրոսյանի անվան միջնակարգ դպրոց ՊՈԱԿ

Գերմաներեն լեզվի ուսուցիչ՝ Տ. ԱՌԱՔԵԼՅԱՆ

ԽՈՒՄԲ /ԱՌԱՐԿԱ/՝ ԳԵՐՄԱՆԵՐԵՆ

ՂԵԿԱՎԱՐ՝ Զ. ՀԱԿՈԲՅԱՆ

ՍԵՎԱՆ 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	2
ՕՏԱՐ ԼԵԶՎԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՄԵԹՈԴԻԿԱ	2-7
Վերջաբան	8
Գրականություն	8
ԳԵՐՄԱՆԵՐԵՆ ԼԵԶՎԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	9-16
ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	9
Վերջաբան	16
Գրականություն	17

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ուսուցիչը պետք է իմանա, թե այս կամ այն մեթոդով աշխատելիս աշակերտի որ ընդունակությունն է զարգանում՝ հիշողական, տեսողական, արագ, դանդաղ մտածելու, բանավոր կամ գրավոր խոսքի և այլն, առաջարկում եմ մի քանի մեթոդներ, որոնք կնպաստեն օտար լեզվի դասավանդման պրոցեսում սովորողների հիշողության, բանավոր և գրավոր խոսքի զարգացմանը, բառապաշարի հարստացմանը:

Շարադրություն և թելադրություն գրելիս աշակերտները սովորաբար լարվում են, սակայն այս մեթոդներով աշխատելիս նրանց մոտ մեծ հետաքրքրություն է առաջանում և աշխատում են սիրով:

Հոդվածում կարևորվում է նաև բառապաշարի ուսուցման գործընթացը:

Բանալի բառեր՝ կարճ շարադրություն, խմբային և զույգային թելադրություն, քարտային բառապաշար, դերային խաղ:

ՕՏԱՐ ԼԵԶՎԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՄԵԹՈՂԻԿԱ

Մանկավարժությունն ըստ Յու. Կ. Բաբանսկու գործառնում է մի շարք հասկացություններ, օրինակ՝ գիտելիք, կարողություն, հմտություն, հնար, միջոց, մեթոդ և այլն: /Մանկավարժություն, Յու. Կ. Բաբանսկի 1-ին մաս, Երևան, 1986, էջ 11/

Կցանկանայի անդրադառնալ մեթոդ՝ հասկացությանը և խոսել մի քանի մեթոդների մասին, որոնք կնպաստեն գերմաներեն լեզվի ուսուցման պրոցեսին: Մեթոդը հունարեն «metodos» բառից է, որը սկզբնապես նշանակել է դեպի որևէ նպատակ տանող ուղի: Ուսուցման մեթոդը ուսուցչի և սովորողների կարգավորված, փոխկապակցված գործունեության եղանակ է, գործունեություն, որն ուղղված է ուսուցման գործընթացում կրթության, դաստիարակության ու զարգացման խնդիրների լուծմանը: Մեթոդը գործիք է ուսուցչի ձեռքում, որի միջոցով վերջինս հասնում է իր առջև դրված նպատակին:

Հայտնի գերմանացի հնեաբան Հայնրիխ Շլիմանը տիրապետում էր մոտ երկու տասնյակ լեզուների: Պոլիգլոտ Հայնրիխ Շլիմանը ուներ լեզվի ուսուցման իր սեփական մեթոդը՝ փոքրիկ թարգմանություններ էր կատարում, անգիր էր սովորում, սկզբում քիչ քանակությամբ, սակայն հետագայում կարողանում էր անգիր անել նույնիսկ վեպեր և կարճ շարադրություն էր գրում, որը ստուգում էր մասնագետը և ուղղումներ կատարում:

Այս մեթոդներից հատկապես ուշագրավ է «շարադրության» մեթոդը և ինքս փորձեցի այն կիրառել ու բավականին մեծ արդյունք ունեցա: Շարադրություն գրելիս աշակերտի մոտ զարգանում է թե՛ գրավոր, թե՛ բանավոր խոսքը, ընդ որում սովորողը փորձում է իր ունեցած գիտելիքի հիման վրա կազմել ճիշտ քերականական նախադասություններ: Շարադրության թեման սակայն պետք է լինի թեթև բնույթի, հետաքրքիր, կարելի է նույնիսկ որոշ դեպքերում տալ օգնող բառեր: Շարադրությունը կարող է բաղկացած լինել 5-7 նախադասությունից: Թեմաները կարող են լինել տարբեր և բխեն սովորողի հետաքրքրությունից, օրինակ՝ «Ինչպես են մտածում գերմանացիները», «Ինչ են մտածում ծառերը», «Ինչ կանեի, եթե հայտնվեի Գերմանիայում», «Ինչ կվերցնեի հետս անմարդաբնակ կղզի գնալիս», «Ես հայտնվել եմ տիեզերքում և ինչ եմ տեսնում այնտեղ», «Իմ ձեռքում կախարդական փայտիկ է «Ես Մյունխենում եմ և մասնակցում եմ Հոկտեմբերյան տոնին», «Ես Բեռլինում եմ հոկտեմբերի 3-ին» և այլն: Շարադրությունները կարելի է հանձնարարել նաև որպես խմբային աշխատանք. դասի թեմային համապատասխան թեմա ընտրել, դասարանը բաժանել խմբերի և հանձնարարել գրել, որից հետո ստուգել և խմբերի հետ միասին գնահատել ու որոշել լավագույնը: Խմբային շարադրություն գրելիս, հատկապես մրցակցային, աշակերտները աշխատում են մեծ ոգևորությամբ, խմբի անդամները աջակցում են միմյանց, հաշվի առնում խմբի յուրաքանչյուր անդամի կարծիքը:

Շարադրություններ կարելի է հանձնարարել և՛ իմաստի ընկալման փուլում, և՛ կշռադատման փուլում՝ կախված դասի բնույթից, թեմայից: Օրինակ՝ «Vierländersee» դասը մատուցելուց հետո իմաստի ընկալման փուլում կարելի է հանձնարարել 2-3 նախադասությամբ գրել իրենց տպավորությունները՝ ինչպես են նավարկում Բոդենգետով, որը ողողում է չորս երկրների ավերը կամ գրել գովազդ՝ որոնք են

Բողենգեեի առավելությունները: Երբեմն շարադրության վերնագիրը կարող են առաջարկել նաև աշակերտները և իրենք էլ որոշեն՝ որ վերնագիրը ընտրել:

Գերմանիայի դաշնային երկրները ուսումնասիրելիս քարտեզով աշխատելուց հետո կշռադատման փուլում կարելի է հանձարարել յուրաքանչյուր աշակերտի գրել տարբեր թեմաներով փոքրիկ շարադրություն: Օրինակ՝ «Ես հանկարծ հայտնվել եմ Բավարիայում», «Եթե ես լինեմ Թյուրինգենում, որ քաղաքներ կայցելեմ» կամ որ հարևան երկրներ կայցելեմ» և այլն: Այս պարագայում աշակերտի մոտ զարգանում է նաև տեսողական հիշողությունը:

Շարադրություններ կարելի է հանձնարարել նաև որպես տնային աշխատանք: Ամեն կերպ պիտի աշխատել, որ տնային աշխատանքը լինի ստեղծագործական բնույթի, որ աշակերտը ոչ միայն գրի ու որոշի, այլև փնտրի, գտնի, խոսք կազմի/Հայոց լեզվի դասավանդման մեթոդիկա 2-րդ հրատարակություն, Ս.Վ Գյուլբուդադյան, Երևան 1987, էջ 23/: Նաև կարևոր է, որ սովորողը շարադրությունը գրելիս մտածի գերմաներեն լեզվով, երբեմն նրանք գրում են մայրենի լեզվով և թարգմանում գերմաներեն, ինչը հանգեցնում է և դժվարությունների, և շարահյուսական ու քերականական սխալների:

Սովորողների գրավոր և բանավոր խոսքը տարբեր մակարդակի է լինում: Սովորաբար ավելի կուռ և կազմակերպված է լինում գրավոր խոսքը, քանի որ գրավորի ժամանակ սովորողը հնարավորություն ու ժամանակ ունի մտածելու, ընտրություն կատարելու: Մենք պետք է ձգտենք, որ աշակերտի թե՛ գրավոր, թե՛ բանավոր խոսքը հավասարապես զարգանա:

Հաջորդ մեթոդը, որի մասին կցանկանայի խոսել գույգային թելադրությունն է և խմբային թելադրությունը: Թելադրությունը գրավոր խոսքը զարգացնող կարևոր մեթոդներից մեկն է: Թելադրություն գրելիս սովորողը մտածում է, թե ինչպես գրել, թելադրելու ընթացքում հնարավորություն ունի ուղղել սխալը, եթե իհարկե ուղղումը ճիշտ է: Երբեմն աշակերտը բառը գրում է ճիշտ և ուղղելով այն դարձնում սխալ: Ավելի հեշտ է աշակերտին ետ պահել սխալից, քան սխալն անելուց հետո ուղղել այն, երբ արդեն աշակերտի ձեռքը, աչքը, արտասանական համակարգը սովորում է սխալին: Զույգային և խմբային թելադրության տեսակները հնարավորություն են

տալիս խուսափել սխալներից, ընդ որում թելադրվող նյութը տպավորվում է ն՝
թելադրողի, ն՝ թելադրությունը գրողի մոտ: Մատուցվող նյութը բաժանվում է փոքր
հատվածների, յուրաքանչյուր գույգի տրվում է հատվածներից մեկը, գույգերից մեկը
թելադրում է, մյուսը գրում է: Թելադրողը նստում է այնպես, որ չտեսնի իր գույգի
գրավորը, սակայն կարող է մանրամասնորեն ասել բառերի ուղղագրությունը,
կետադրությունը: Թելադրությունն ավարտելուց հետո գույգը ստուգում է գրավորը:
Երբ աշակերտը ինքն է ուղղում սխալը, այլևս չի մոռանում և սխալը չի կրկնում:
Ուսուցիչը վերջում անպայման ստուգում է աշակերտի ստուգած գրավորը՝ երբեմն
լինում են բացթողումներ: Թելադրություն գրելիս աշակերտը նաև գաղափար է
կազմում տեքստի առանձին հատվածների մասին, հարցերի միջոցով կարելի է
պարզել, թե ինչ են հասկացել, ինչը չեն հասկացել և ամբողջացնել մատուցվելիք
նյութը: Թելադրության այս տեսակը, ինչպես նաև խմբային թելադրությունը, մեծ
ոգևորություն են առաջացնում աշակերտների մոտ: Խմբային թելադրության
ժամանակ դասարանը բաժանվում է խմբերի: Այս դեպքում նույնպես, ուսուցչի
հայեցողությամբ, կարելի է վերցնել նոր մատուցվելիք տեքստը կամ առանձին
փոքրիկ տեքստեր: Առաջինի դեպքում աշակերտները գրելուն և թելադրելուն
գուզահեռ նաև ծանոթանում են տեքստին: Աշակերտները իրենք են որոշում, թե իրենց
թիմից ով է գրելու: Թելադրության տեքստը հարկավոր է փակցնել պատին. խմբի
անդամները մոտենում են տեքստին, նայում բառը, այնուհետև մոտենում են գրողին և
թելադրում բառ առ բառ: Աշակերտը պետք է կարողանա մտապահել բառը, գրելաձևը:
Հաճախ, երբ աշակերտը մոտենում և թելադրում է բառը, անհրաժեշտություն է լինում
նույն բառի գրելաձևը ևս մեկ անգամ ճշտելու, օրինակ, երբ գրողը հարցնում է՝ ինչպես
է գրվում ie, թե i , ո, թե ոո, մեծատառ, թե փոքրատառ և այլն: Աշակերտները
հավաստիացնում են, որ շատ բառեր հիշում են այս թելադրությունը գրելուց հետո:
Այս թելադրությունը օգնում է նաև հիշողության ամրապնդմանը: Խմբի անդամները
երբեմն հետաքրքիր ձևով դասակարգում են իրենց աշխատանքը. մեկը ստուգում է,
մյուսը հետևում է կետադրությանը կամ աշխատում են հավասարապես:

Կարևոր է նաև այն հանգամանքը, թե որ թիմը ավելի արագ կավարտի աշխատանքը:
Խմբերը այս դեպքում ստուգում են ոչ թե իրենց, այլ մյուս խմբի գրավորը, որից հետո

ուսուցիչը կրկին վերստուգում է, սխալի բացթողման դեպքում հանում է միավոր և գնահատում աշխատանքը:

Այս մեթոդները նպաստում են գրավոր խոսքի զարգացմանը, ինչպես նաև բառապաշարի հարստացմանը: Սակայն բառապաշարի հարստացման համար տարրական դպրոցում մեկ այլ արդյունավետ մեթոդի մասին կցանկանայի խոսել, որը անվանել են «քարտային բառապաշարի մեթոդ»: Բառապաշարի դժվարությունները կարող են սովորողի մեծ ջանքերով կառուցված մոտիվացիան ֆրուստրացիայի վերածել և փոխել վերաբերմունքը օտար լեզվի հանդեպ /Frühes Deutsch, Fachzeitschrift für Deutsch als Fremd- und Zweitsprache 22-2011, Seite 4/: Քարտի վրա գրվում է չորս բառ և բառերից մեկի թարգմանությունը: Աշակերտը պետք է կարողանա գուշակել հայերենին համարժեք գերմաներեն բառը: Հաջորդ քարտիկի վրա կարող է կրկնվել նախորդ բառը, որպեսզի սովորողը կարողանա աշխատել նաև բացառության սկզբունքով: Սկզբում քարտիկի վրա գրվում են այն բառերը, որոնք հնչողությամբ նման են մայրենի կամ ռուսերեն լեզվին: Այսպես ամեն անգամ աշակերտին տրվում է նոր բառապաշար, որտեղ կրկնվում են նաև անցած բառերը, ինչը օգնում է բառապաշարի հարստացմանը և հիշողության ամրապնդմանը:

Բերեմ մի քանի օրինակ՝

ավտորուս

die Suppe

essen

der Bus

hier

կարտոֆիլ

das Wasser

der Kartoffel

mein

der Bus

հեռախոս
dort
das Telefon
der Tag
lesen

ավտոմեքենա
lesen
mein
das Telefon
das Auto

սուրճ
der Kaffee
jetzt
in
schreiben

իմ
das Auto
mein
der Bus
das Telefon

Երրորդ և չորրորդ դասարաններում առավել նպատակային մեթոդ է դերային խաղը, որը աշակերտների մոտ մեծ հետաքրքրություն է առաջացնում: Օրինակ կենդանիների անվանումները ուսուցանելիս յուրաքանչյուր աշակերտի տրվում է մի կենդանու անվանում. սովորողները կանգնում են շրջանով և գնդակը միմյանց նետելով հարցնում են անունը, այսպիսով նրանք սկսում են մտապահել նաև ընկերների անունները: Նրանք, ովքեր լավ չեն հիշում խաղից դուրս են մնում: Հաղթում է այն սովորողը, ով հիշում է բոլորի անունները: Այս մեթոդը կարելի է կիրառել նաև, երբ սովորում են տարվա եղանակները և ամիսները, երկրների անվանումները, օրինակ՝ մեկը Ավստրիայից է գալիս և ավստրիացի է, մյուսը գալիս է Գերմանիայից և գերմանացի է, երրորդը՝ Հայաստանից և այլն /Ich komme aus Armenien. Ich bin Armenierin. Ich komme aus Österreich. Ich bin Österreicher/.

Վերջաբան

Քանի որ ուսուցիչը համարվում է ստեղծագործող անձ իր աշխատանքում, առաջարկվող մեթոդները յուրաքանչյուր ուսուցիչ կարող է կիրառել յուրովի՝ հաշվի առնելով սովորողների հետաքրքրությունները, կարողությունները, ուսուցանվող նյութի բարդությունը և այլն:

Գրականություն

1. Մանկավարժություն, Յու. Կ. Բաբանսկի 1-ին մաս, Երևան, 1986
2. Frühes Deutsch, Fachzeitschrift für Deutsch als Fremd- und Zweitsprache Heft 22-2011
3. Peter Bimmel und Ute Rampillon, Lernautonomie und Lernstrategien, 2000 Goethe-Institut, München
4. Հայոց լեզվի դասավանդման մեթոդիկա 2-րդ հրատարակություն, Ս.Վ Գյուլբուդաղյան, Երևան 1987

ԳԵՐՄԱՆԵՐԵՆ ԼԵԶՎԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Նկատի ունենալով այն, որ գերմաներեն լեզուն լայն հասարակության կողմից հաճախ ընկալվում է որպես կոպիտ և խրթին լեզու, փորձել ենք հողվածում ներկայացնել գերմաներեն լեզվի առանձնահատկություններն ու յուրահատկությունները, առավելությունները, բարդ հնչողության պատճառները:

Հողվածում ներկայացված են հետաքրքիր փաստեր, ինչպես նաև հայտնի մարդկանց մտքեր գերմաներենի լեզվի մասին՝ նպատակ ունենալով հետաքրքրություն առաջացնել համաշխարհային մշակույթի և գիտության մեջ մեծ ավանդ ունեցող այս լեզվի նկատմամբ:

Բանալի բառեր՝ բաղաձայների առանձնահատկություն, կոպիտ հնչողություն, բառակազմություն, դարձվածք, կարծրատիպ, խորհրդավոր լեզու:

Անշուշտ հայտնի է հայտնի է՝ գերմաներենը հարուստ և ճկուն լեզու է: Այն համաշխարհային բազմաթիվ հասարակական գիտություններում մեծ ավանդ ունի, քանի որ շատ գիտնականներ (Ալբերտ Էյնշտեյն, Յոհան Կեպլեր, Հենրիխ Հերց), փիլիսոփաներ (Իմանուիլ Կանտ, Վիլհելմ Հումբոլդտ, Էդմունդ Հուսերլ, Ֆրիդրիխ Նիցշե), գրողներ (Յոհան Վոլֆգանգ Գյոթե, Հայնրիխ Հայնե, Ֆրիդրիխ Շիլլեր, Հերման Հեսսե), հոգեբաններ (Զիգմունդ Ֆրեյդ, Վիլյամ Շտեռն), երգահաններ (Յոհանն Սեբաստիան Բախ, Ռիխարդ Վագներ, Ռոբերտ Շուման, Լուդվիգ Վան Բեթհովեն, Վոլֆգանգ Ամադեուս Մոցարտ) աշխատել և ստեղծագործել են հենց այս լեզվով:


Գերմաներեն լեզուն ունի բազում առանձնահատկություններ է: Դրանցից առանձնացնենք հետևյալը՝ այս լեզվում համեմատաբար շատ են բաղաձայնները: /Գերմաներենի բաղաձայնների առանձնահատկությունների տեսակետից կարևոր է արտաբերման ժամանակ առավել ուժեղ մկանային լարվածությունը, ինչպես նաև գերմաներենի բաղաձայնների արտաբերման համար անհրաժեշտ արտամղվող օդի


ուծը ավելի մեծ է: Ինքնին հասկանալի է, որ ուժեղ կամ ամուր պատնեշի ստեղծումը պահանջում է մկանների առավել մեծ լարվածություն: Գերմաներենի բաղաձայնական համակարգին բնորոշ մեկ այլ առանձնահատկություն է նաև նրա ձայնեղների շարքի կազմավորման ժամանակ ձայնալարերի հարաբերականորոն ավելի թույլ ակտիվությունը: / Յու. Գաբրիելյան 2015: 16-17/

Այդ պատճառով էլ շատերի մոտ գերմաներենի հնչողությունը շատ բարդ ու դժվարամարս է թվում, երբեմն նաև կոպիտ: Սակայն լեզուն հասկացողների համար այն չափազանց հաճելի է ու գրավիչ` իր հստակ հնչերանգի շնորհիվ:

Բազմաթիվ բարդ երևույթներ, որոնք այլ լեզուներում պարզապես համապատասխան բառ չեն ունենում արտահայտելու համար կամ արտահայտում են մեկ բառով, գերմաներենում արտահայտվում են մի քանի բառերի միավորմամբ, ինչն էլ երբեմն կոպիտ հնչողության տպավորություն է ստեղծում:


Օրինակ`





Կամ եթե այլ լեզուներում մի քանի բառ պետք է օգտագործել ինչ- որ երևույթ բացատրելու համար, գերմաներենում կրկին օգնության է հասնում բառակազմությունը:

Օրինակ՝



Անկախ այն հանգամանքից՝ ամբողջ կյանքում խոսել ես գերմաներեն լեզվով, թե նոր ես սովորել, գերմաներենում կան կանոններ, որոնք իսկապես դժվար է հասկանալ:

Օրինակ՝ das Mädchen նշանակում է աղջիկ, սակայն այս բառը գերմաներենում չեզոք սեռի է, ճիշտ է, այն ունի իր բացատրությունը. chen վերջածանցով գոյականները չեզոք սեռի են, այնուամենայնիվ, երևույթը տարօրինակ է թվում:

Կա ևս մի առանձնահատկություն. գերմաներեն լեզվում կան մի շարք բառեր, որոնց արտիկլը փոխելիս ամբողջովին փոխվում է բառի իմաստը:

Օրինակ՝ **der** Kiefer - ծնոս

der Leiter - ղեկավար

das Studio – ստուդիա

das Mark - ողնուղեղ

der Mast – կայմ

der Otter – ջրասամույր

das Messer - դանակ

die Kiefer - սոճի

die Leiter - սանդուղք

der Studio – ուսանող

die Mark – մարկ/դրամ/, ծայրագավա

die Mast - գիրացում

die Otter – իժ/թունավոր օձ/

der Messer – չափող գործիք

Հաճախ կարելի է հանդիպել նաև այնպիսի բառերի, երբ միևնույն բառը (գոյական, ածական, բայ), կախված խոսքաշարից, կարող է արտահայտել տարբեր իմաստներ (համանուն բառեր):

Օրինակ՝ **der** Ball - գնդակ

die Base - մորեղբոր աղջիկ

die Lache - ծիծաղ

die Scholle - հողակտոր

die Wehe - ձյունակույս

die Bank – նստարան

das Schloß - դղյակ

bereifen - օղակապել

bescheren - պարգևել

laden - հրավիրել

wiegen - օրորել

steinreich - քարքարոս

sieben - մաղել

der Ball - պարահանդես

die Base - հիմք

die Lache – ջրափոս

die Scholle – տափաձուկ

die Wehe - երկունքի ցավեր

die Bank - բանկ

das Schloß - կողպեք

bereifen - եղյամով ծածկվել

bescheren - խուզել


laden - բեռնել

wiegen - կշռել

steinreich - շատ հարուստ

sieben - յոթ/թիվ/

Գերմաներեն լեզվի յուրահատկություններից մեկն էլ կարելի է համարել խոսքաշարում շատ հաճախ կիրառվող դարձվածքները /Funktionsverbgefüge կամ Streckform/, որոնք փոխարինում են բայերին և խոսքը դարձնում ավելի պատկերավոր, հարուստ ու գեղեցիկ:




Մակայն կան մի շարք երևույթներ, զգացմունքներ, որոնք հնարավոր է արտահայտել միայն դարձվածքների /Funktionsverbgefüge/ շնորհիվ:

Օրինակ՝

հայերեն

գերմաներեն



Համեմատելով գերմաներեն լեզուն այլ եվրոպական լեզուների հետ, առաջին տպավորությունը կոպիտ և բարդ լեզու լինելն է: Երբեմն նաև այն ասոցացվում է ֆաշիստական Գերմանիայի հետ, և անմիջապես ստեղծվում թյուր կարծիք, հատկապես որ այսօրվա գերմաներենի արտասանությունը լիովին տարբերվում է այդ ժամանակների գերմաներենի արտասանությունից:

Գերմաներեն լեզվի առավելություններից մեկն էլ հենց նրա բարդությունն է, որովհետև եթե տիրապետում ես այս լեզվին, ապա կարող ես սովորել ցանկացած լեզու: Պատահական չէ ասված, որ գերմաներենը հնարավորությունների լեզու է:

Աշխարհում առաջին տպագիր գիրքը տպվել է գերմաներեն լեզվով: 1455 թվականին գրատպության գյուտարար Յոհան Գութենբերգը գերմաներեն լեզվով տպագրում է Աստվածաշունչը: Ներկայումս գերմաներեն լեզվով է տպվում աշխարհի յուրաքանչյուր տասներորդ գրքից մեկը:

Այսօր աշխարհում ավելի քան հարյուր միլիոն մարդ խոսում է գերմաներեն՝ որպես մայրենի լեզու:

Գերմաներենը պետական լեզու է ոչ միայն Գերմանիայում, այլ նաև հետևյալ եվրոպական զարգացած երկրներում՝ Ավստրիայում, Լիխտենշտայնում, Լյուքսեմբուրգում, Արևելյան Բելգիայում, Շվեյցարիայի գերմանական հատվածում, գերմաներեն են խոսում նաև Հարավային Տիրոլում, Էլզասում և Լոթարինգիայում, Հյուսիսային Շվեդիզում : Բացի այդ գերմաներենը փոքրամասնության լեզու է հանդիսանում մի շարք երկրներում, ինչպես օրինակ Ռումինիայում, Հարավաֆրիկյան Հանրապետությունում: Այն նաև աֆրիկյան Նամիբիայի ազգային լեզուն է:

Եվս մեկ հետաքրքիր փաստ. ԱՄՆ-ում Մեծ Բրիտանիայի հետ կապերը վերջնականապես խզելու համար քիչ էր մնում որպես պաշտոնական լեզու հաստատվեր գերմաներենը: Ֆիլադելֆիայում անցկացված աշխարհամասային զագաթնաժողովի ընթացքում քննարկվում էր պաշտոնական լեզու հաստատելու հարցը: Վերջնական քվեարկության արդյունքում գերմաներենը մեկ ձայնի տարբերությամբ տեղը զիջում է անգլերենին:

Գերմաներեն լեզվի մասին գովեստի խոսքեր են ասել բազմաթիվ հայտնի մարդիկ: Նորաձևության հայտնի դիզայներ Ժան Պոլը գերմաներեն լեզուն համեմատել է երգեհոնի հետ՝ ասելով. « Գերմաներեն լեզուն երգեհոն է լեզուների շարքում»:

Իսպանացի գրող, պատմաբան, լրագրող Սալվադոր դե Մադարիգան ասել է. «Գերմաներենը ամենաերաժշտական լեզուներից մեկն է, հնչողությամբ նման է երգեհոնի և լիարժեք է դարձնում նվագախումբը»:

Ֆրանսիացի գրող Մադամ դը Սթալը ասել է. «Գերմաներենը շատ ավելի փիլիսոփայական է, քան իտալերենը, ավելի պոետիկ է իր համարձակությամբ, քան ֆրանսերենը, և ռիթմով՝ ավելի հարմարավետ, քան անգլերենը»:

Ավստրիացի գրող Կարլ Կրաուսը ասել է. «Գերմաներեն լեզուն ամենախորն է, իսկ գերմաներեն խոսքը՝ ամենամակերեսայինը»:

Գերմանացի աշխարհահռչակ բանաստեղծ Յոհան Վոլֆգանգ ֆոն Գյոթեն ասել է. «Գերմաներեն լեզուն շատերի համոզմամբ աշխարհի ամենակարևոր լեզուներից մեկն է, խորը և դժվար՝ հոգով ու մտքով»:

«Ով հասկանում և սովորում է գերմաներեն լեզուն, գտնվում է շուկայում, որտեղ բոլոր ազգերն իրենց ապրանքներն են առաջարկում, և նա հարստանում է՝ թարգմանչի դեր կատարելով»: Այս խոսքերը նույնպես պատկանում են Գյոթեին, որի ստեղծագործությունները թարգմանվել են աշխարհի գրեթե բոլոր լեզուներով, ինչպես նաև հայերենով:

Վերջաբան

Հովհաննես Թումանյանը թարգմանության մասին ասել է, որ այն նման է վարդի, որը տեսնում են ապակու հետևից. տեսնում են միայն գեղեցկությունը, բայց բույրը չեն զգում: Այնպես որ, Գյոթեի ստեղծագործությունները՝ հատկապես բանաստեղծությունները, անհրաժեշտ է ընթերցել հենց գերմաներեն լեզվով և զգալ նրանց բույրն ու հմայքը:

Հուսով ենք՝ կարողացանք որոշ չափով կոտրել գերմաներեն լեզվի մասին կոշտ ու կոպիտ լինելու թյուր կարծրատիպը: Գերմաներեն լեզվի յուրահատկությունների և առանձնահատկությունների մասին կարելի է անվերջ խոսել, սակայն սկզբում անհրաժեշտ է հասկանալ և սիրել այս հետաքրքիր, խորհրդավոր և հմայիչ լեզուն:

Գրականություն

1. Գաբրիելյան Յու. Գերմաներեն լեզվի տիպաբանություն, 2-րդ վերամշակված հրատարակություն, Երևան 2015
2. <http://www.bento.de/gefuehle/deutsch-lernen-so-verwirrend-ist-die-deutsche-sprache-2096599/>
3. <https://vds-ev.de/literatur/literarisches/sprueche-und-zitate-zur-deutschen-sprache/>.
4. <http://www.rhetorik-netz.de/sprueche/>
- 5 . Duden, Deutsch als Fremdsprache, Max Hueber Verlag 2003
6. Gr. M. Andreassjan, Deutsch-Armenisches Wörterbuch , Jerewan 1976